

Ս.ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ

# ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնում է Տյառնընդառաջը՝ 40-օրյա Հիսուսի ընծայումը տաճարին:

Փետրվարի 13-ին-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, կատարվեց երեկոյան ժամերգություն, որից հետո տեղի ունեցավ նախատոնակի արարողություն, որը և ավետեց Տերունական տոնի սկիզբը: Նախատոնակի արարողության ավարտին Հայոց Հայրապետի հանդիսպետությամբ կատարվեց Անդաստանի արարողություն, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս ծագերը:

Անդաստանին հաջորդեց մոմերի օրհնության կարգը, որոնց կրակով և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բակում բոցավառվեց ավանդական խարույկը՝ իբրև Քրիստոսի լույսի խորհրդանիշ:

Հաջորդ օրը, փետրվարի 14 ին, Տյառնընդառաջի տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

Հայ Եկեղեցու կանոնի համաձայն, Տերունական այս տոնին, չնայած որ սկսվել էր Մեծ Պահքը, մատուցվող Պատարագի ընթացքում բացվեց Ս. Խորանի վարագույրը:

Վերջին տարիներին, Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ, ավանդույթ է դարձել Տյառնընդառաջի Պատարագից հետո հայոց եկեղեցիներում կատարել նորապսակների օրհնության կարգ:

Այս տարի օրհնություն ստացած զույգերին տրվեցին նաև նվերներ՝ հատուկ նորապսակների համար հրատարակված ճերմակակազմ Նոր Կտակարաններ, իսկ նորապսակ հարսներին՝ նաև մարգարտաշար մանյակներ, որ այս առիթով նվիրաբերել է հոնկոնգաբնակ բարերար Պիեռ Հաջարը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*